ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ստորև տրվում է բովանդակության գլխավոր մասերը)

Թ. 1ա.— (Եկեղեցու դերը իր հաւատացեալների նկատմամբ)։

Թ. 28ա.— Առաջնորդարանի դրութիւնը։

Թ. 38ա.— Առաջնորդական այցելութիւններ։

Թ. 62ա.— Եկեղեցու ներքին կեանք։

Թ. 128ա.— Ամուսնական հարցեր։

Թ. 130ա.— Մարդաճամարի խնդիր։

Թ. 133ա.— Վարչական կեանք։

Թ. 150ա.— Արտաքին յարաբերութիւն։

Թ. 157ա.— «Հայաստանի օգնութեան» հարց։

Թ. 153ա.— Գաղթականութեան խնդիր։

Թ. 158ա.— Որբերի խնդիր։

Թ. 165ա.— Վերջաբան։

(Թթ. 168—176 մեքենագրված գրություններ են։ Այստեղ կան երեսփոխանական ժողովի հրավիրագիրը, երեսփոխանների ցուցակը, Նիր Իստ Ռըլիֆի ընդհանուր քարտուղար C. V. Vickrey-ի գրած 25 օգոստոսի 1923 թ. անգլերեն նամակի պատճենը որբ երեխաների մասին, վերջում տեղեկագրի բովանդակության ցանկը)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)

Տեղեկագիր տարեկան
Առաջնորդարանի Հայոց Ամերիկայի
Տ. Տիրայր Եպիսկոպոսի
1922 դեկտ. 5—1923 հոկտ. 7—8։

Թ. 1ա.— (թիւ) 2521
1923 Հոկտեմբեր 7

«Որ գործէ զերկիր իւր՝ յագեսցի հացիւ. իսկ որ գիտեր երթան զհանրութեան՝ պակասամիտք են»։

Առակք, ԺԲ, 11.

Հոգեշնորհ Հա՛ր,

Մեծարոյ Պ. Պ. Երեսփոխանք։

Թ. 167ա.— Այդ մեծ յոյսերով ու հաւատքով և Տիրոջ օրհնութիւնը հայցելով ամէնքիդ համար,

կամք սիրով առ ամէնքդ,
Տիրայր Եպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի։

(Այստեղ կա Տիրայր Սրբազանի կարմիր կնիքը, որի տրամագիծն է 5 սմ.։ Կենտրոնում կան զույգ Մասիսները, մի արծիվ, ինչպես նաև եպիսկոպոսական խույրն ու գավազանը։ Վրան գրված է հետևյալը.)

Տիրայր Եպիսկոպոս
1917
Bishop Tirayre.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Առաջին և 168-րդ թերթերը ներկայացնում են առաջնորդարանի նամակի թուղթը, որի վերևում տպված է հետևյալը)

Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի,
Բոստոն, Մէաս.
The prelacy of the Armenian Church in America, 401 Shawmut Ave., Boston, Mass.

(Կենտրոնում կա առաջնորդարանի էմբլեման, որի վրա գրված է հետևյալը)

Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
American Diocese of the Armenian Church.

№ 358
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 146։— **Պրակներ՝** չունի։ Ծալված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են։— **Մեծությունը՝** 28,7×21,7×1,7 սմ.։— **Նյութը՝** բարակ և հաստարակ թուղթ։— **Կազմը՝** սկզբում և

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, և ԺԱ—ԺԲ-ից։

վերջում մեկական հասարակ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կոնակի մասում գրություն չկա:— **Տողերը՝** անհամաչափ, 37—41:— **Գծումներ՝** չկան:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Տիրայր Արքեպիսկոպոս:— **Պատվիրատուն՝** Ամերիկայի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:— **Ժամանակը՝** 5 սեպտեմբերի 1926 թ.:— **Վայրը՝** Բոստոն, Մեսսաչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն՝** ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ստորև տրվում է բովանդակության գլխավոր մասերը)

Թ. 1ա.— (Նախաբան):

Թ. 4ա.— Առաջնորդական այցելություններ:

Թ. 47ա.—Առաջնորդարանի դրությունը:

Թ. 65ա.— Եկեղեցու ներքին կեանք:

Թ. 97ա.— Սահմանադրության վերաքննություն:

Թ. 102ա.— Հանգանակության խնդիր:

Թ. 106ա.— Հայ-Ամերիկեան Ընկերակցություն: (The Armenian-American Society).

Թ. 109ա.— Եկեղեցական համագումար և հետևանքը:

Թ. 115ա.— Վարչական կեանք:

Թ. 120ա.— Համագաղութային մարմին:

Թ. 121ա.— Առաջնորդարանի Դիւան:

Թ. 126ա.— Արտաքին յարաբերություն:

Թ. 132ա.— Հայրենիքի օգնության խնդիր:

Թ. 134ա.— Եկեղեցու թերթեր:

Թ. 136ա.— Վերջաբան:

(Թթ. 141—146 մեքենագրված գրություններ են: Այստեղ կա երեք էջանոց անգլերեն մի գրություն, հետևյալ վերնագրով՝ My Dear Brother-Bishops and Gentlemen of the Convention, ինչպես նաև վերջում տրված է տեղեկագրի բովանդակության մանրամասն ցանկը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)
Տեղեկագիր տարեկան
Առաջնորդի Հայոց Ամերիկայի
Տ. Տիրայր Արք-Եպիսկոպոսի
1925 Սեպտ. 6—7—1926 Սեպտ. 5:

Թ. 1ա.— 1926 Սեպտ. 5

«Վերակացու եմք ճշմարտության ... վարեցայց ըստ իշխանութեանն, զոր ետ ինձ Տէր ի շինել և ոչ ի քակել»:

Բ. Կորնթ. ԺԳ. 8—11.

Հոգեշնորհ Հարք,
Մեծարող Պ. Պ. Երեսփոխանք:

Թ. 140ա.— Օրինութիւնն Աստուածային և սէրը փրկչական Ձեր և ամէնքիս մէջ տիրելու ընձանօք կամք Հայրական օրհնութեամբ

Տիրայր Արքեպիսկոպոս
Առաջն. Հ. Ամ.

(Այստեղ կա Տիրայր Սրբազանի կարմիր կնիքը, որի վրա գրված է հետևյալը)

Տիրայր Արքեպիսկոպոս
1917
Archbishop Tirayre

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Առաջին թերթը ներկայացնում է առաջնորդարանի նույն նամակի թուղթը, ինչպես նախորդ տեղեկագրում, № 357):

№ 359
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 62.— **Պրակներ՝** չունի: Ծակված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են:— **Մեծությունը՝** 29×21,6×0,7 սմ.:— **Նյութը՝** բարակ և հասարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում և վերջում մեկական հասարակ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում մի հատ հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կոնակի մասում գրություն չկա:— **Տողերը՝** անհամաչափ, 36—39:— **Գծումներ՝** չկան:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Տիրայր Արքեպիսկոպոս:— **Պատվիրատուն՝** Ամերիկայի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:— **Ժամանակը՝** 15—16 մայիսի 1927 թ.:— **Վայրը՝** Բոստոն, Մեսսաչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն՝** ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ստորև տրվում է բովանդակության գլխավոր մասերը)

Թ. 1ա.— (Նախաբան):

Թ. 2ա.— Առաջնորդական այցելություններ:

(Թթ. 18-ի և 19-ի միջև կա եկեղեցու մի նկար, որի ներքևը գրված է «Հայ Առաք. Եկեղեցին Շիքակոյի»):

Թ. 31ա.— Առաջնորդի անձնական մասնակցություն:

Եկեղեցու ներքին վիճակ

Թ. 45ա.— Վիճակագրություն

ա. Քանատայի մէջ	1.165= 1.165
բ. Հիւսիսային Ամերիկա	84.200—103.420
գ. Հարաւային Ամերիկա	5.000— 7.500
մօտաւորապէս՝	90.365—112.085:

Թ. 47ա.— Ուսումնական Խորհուրդ:

Թ. 48ա.— Հայաստանի երկրաշարժ:

Թ. 49ա.— Հ.Բ.Ը. Միութիւն:

Ս. Էջմիածնի Ճեմարան:

Թ. 50ա.— Յարաբերութիւն Մ. Աթոռի հետ:
Թ. 51ա.— Առաջնորդարանի վիճակ:
Թ. 53ա.— Առաջնորդարանի Դիւան:
Վարչական ժողովներ:
Թ. 54ա.— Հարաւային Ամերիկա:
Թ. 55ա.— Մեր ուղին:
Թթ. 56—59 մեքենագրված գրություններ են: Այստեղ կա երեսփոխանական ժողովի հրավերն ու օրագիրը, ինչպես նաև տեղեկագրի բովանդակության մանրամասն ցանկը):
Թ. 60ա.— Ցանկ անդամոց երեսփոխանական ժողովի 1927 Մայիս 15—16, Բոստոն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)
Տեղեկագիր տարեկան
Առաջնորդի Հայոց Ամերիկայի
Տ. Տիրայր Արք-Եպիսկոպոսի
1926 Սեպտ. 6—1927 Մայիս 15—16
Թ. 1ա.— 1927 Մայիս 15—16
«Ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ է իմաստութիւնն Աստուծոյ ... աղաչեմ մի ձանձրանալ ի նեղութեանս մերում, որ վասն ձեր է, որ է փառք մեր»:

Եփս. Գ. 10.15

«Եղէ ընդ տկարս, իբրև տկար, զի զտկարսն շահեցայց. ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերևս ապրեցուցից զոմանս»:

Ա. Կորնթ. Թ. 22

Հոգեշնորհ Հարք,
Մեծարոյ Պ. Պ. Երեսփոխանք.
Թ. 55ա.— Կար և յաջողութիւն մաղթելով ամէնքիդ, Հայրական օրհնութեամբ,
Տիրայր Արքեպիսկոպոս
Առաջն. Հ. Ամ.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Առաջին թերթը ներկայացնում է առաջնորդարանի նույն նամակի թուղթը, ինչպես նախորդ երկու տեղեկագրերում, № 357 և 358):

№ 360
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 50:— **Պրակները՝** 3:— **Մեծությունը՝** 21,4×17,2×0,5 սմ.:— **Նյութը՝** մաքուր սպիտակ գծավոր թուղթ:— **Կազմը՝** սև մոմլաթով ծածկված բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 3ա, 3բ, 28ա—49բ, 50բ:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրությունն՝** չունի:— **Գրիչը՝** Գրիգոր ավագ քահանա Մանդակունի:— **Պատվիրատուն՝** Սուրեն Պետրոսյանց:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է 1965 թ. փետրվարի 27-ին Հոգևոր Ճեմարանի գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագիրն ինքնակենսագրությունն է Գրիգոր ավագ քահանա Մանդակունու, որ ծնվել է Սխալցիսայում 1846 թվականին բնիկ կարնեցի Մատթեոս Հակոբի Պետրոսյանի և Մարգարիտ Ստեփանի Ինճիկյանի ընտանիքում: Աշխատության մեջ տրվում են և՛ կենսագրական տվյալներ, և՛ հեղինակի կյանքի հետաքրքիր էպիզոդներ:

Հետաքրքրության համար ստորև տրվում են միայն գործի առաջաբանն և նյութերի ցանկը, որ կազմել է նույն ինքը հեղինակը:

Թ. 2ա.— Յառաջաբան.

Պետրոսեանց տոհմի պանծալիդ Սուրէն, ըստ հարկադրանացդ յանձն առայ և ահա գրեցի կեանքիս՝ այն էլ միայն զարմանալի և նոյն իսկ հրաշալի արկածները. գրեցի, բայց ոչ ըստ սովորականին մտայ կենսագրական մանրամասնութիւնների մէջ. գիտենալով՝ որ զառամութեան աստիճանին հասած մի անձն՝ եթէ սկսէր իւր մօր որովայնի ծնած օրիցն մանրամասն գրել մինչև հողի որովայնը մտնելու օրուայ իւր կեանքին պատահած՝ ինչ որ յայտնի և ինչ որ գաղտնի, ինչ որ մտատանջութեամբ կրած և ինչ որ կրքերից զգածուած, ինչ որ ապերախտներից խոցոտուած և ինչ որ բարեկամներից տապակուած. ինչ որ հիւանդութիւններից քամուած և ինչ որ սիրելի մեռածների հետ գրեթէ մեռած դառնակսկիծ արկածները և կարդար մարդկանց և հրեշտակների առաջ. այն անտանելի ցաւերը՝ որ տարել է. այն կսկծեցնող վէրքերը՝ որ կրել է. և բաղդի այն հարուածները՝ որ տեսել է. այս բոլորը լսելով՝ չէ թէ միայն մարդիկ այլև հրեշտակներն անգամ կզարմանային, թէ մի մահկանացու մարդ արդեօք ի՞նչպէս է կարողացել այսպիսի վշտերն ու ցաւերը կրել և ապրիլ. մի սիրտ՝ ի՞նչպէս է այսքան տանջանքները համբերութեամբ տարել և առողջ մնալ. ահա նոյն իսկ այս կէտումը պէտք է տեղ տեղ (թ. 2բ) ցաւալի փորձերի ծովերի մէջ սպառուած ուժով լողալուս վերայ զարմանաք, և տեղ տեղ էլ արկածներիս յուսահատութեան կէտին հասնելուն պէս՝ Ամենաբարձրեալի յանկարծահաս օգնութեան վերայ ափիբերան ապշիք ու սքանչանաք. ուստի սկսեցէք ուշադրութեամբ կարդալ «զի ծանիցես զբանիցն զճշմարտութիւն»:

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի:

Թ. 50ա.— Ցանկ. էջ

1. Ծնունդս . . . . . (5) 4ա
2. Ծաղիկ հիւանդութիւն . . . (6) 4բ
3. Մօրս մահը . . . . . (8) 5բ
4. Պետրոս աւագ քահանայ հօրեղբօրս մահը . . . . . (10) 6բ
5. Փախուստս Շիրակի Բողազքեսասն գիւղը . . . . . (14) 8բ
6. Գիւղում կեանքս և ս. Էջմիածին ուղևորիս . . . . . (17) 10ա
7. Մայր Աթոռ ս. Էջմիածնում Վեհ. Մատթէոս Ա.ից որդեգիր ընդուն-

(ռիլս) . . . . . (21) 12ա
8. Ժառանգաւորաց Ուսումնարանում և հոգևորականի նոր շորեր հանգնիլս (26) 14բ
9. Ս. Էջմիածնի Մայր տաճարում . (27) 15ա
10. Վեհափառի հաճութեամբ Օշականում ամառանոց գնալս . . . (30) 16բ
11. Սեղանատանը մեծ տօն օրերի հացկերոյթը . . . . . (33) 18ա
12. Իմ ընկերակից Ցարութիւնի հետ փախուստս Սևան . . . . (36) 19բ
13. Մօրոքով ընկնիլս. Ս. Մեսրոպի աղբիւրը և արդար Դաւիթը . . (42) 22բ
14. Բարեկենդանի օրերում տեսարաններ . . . . . (47) 25ա
15. Ա. և Բ. դասատուներն և դասական առարկաները . . . . . (50) 26բ

(Հեղինակը պատմում է իր կենսագրության մինչև 1896 թ. երբ հրատարակել է իր սույն գիրքը «Սուրբ Գրոց հին ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով». 915 էջ):

№ 361
ՀԷՔԻԱԹ

Թերթերը՝ 37:— **Պրակները՝** 3:— **Մեծությունը՝** 22×17,6×0,4 սմ.:— **Նյութը՝** դեղնած գծավոր թուղթ:—**Կազմը՝** սև մոմլաթով ծածկված բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում մի թերթ հաստակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն: —**Դատարկ թղթեր՝** չունի::— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է 1965 թ. փետրվարի 27-ին Հոգևոր Ճեմարանի գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է երկու հեքիաթ (թթ. 1ա և 31ա):

№ 362
ՄԱՍԵՀ ԲԱԲԱՋԱՆԻ ԿՏԱԿԸ

Թերթերը՝ 9:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 39×29,7×0,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը՝** ունի շորից մի ծրար: — **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական թերթ թուղթ:— **Վիճակը՝** շատ վատ, տեղ-տեղ պատրված, վառված, քայքայված և պակասավոր:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 4ա, 6բ, 7բ—9բ:— **Տողերը՝** անկանոն, առավելագույնը 67:— **Գծումները՝** մատիտով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** համադանցի Բաբաջանի (Մարտիրոսի) որդի Մասեհ (Աբդլմըսիհ):— **Ժամանակը՝** 30 մայիսի 1794 թ.:— **Վայրը՝** Կալկաթա:— **Ծանոթություն՝** ձեռագիր կտակն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մասեհ Բաբաջանի կտակը գրված է չորս օրինակ: Պահպանված սույն ձեռագիր կտակն այն օրինակն է, որ տրված է ի պահ Կալկաթայի հոգևորական Տեր Ստեփաննոս քահանա Տեր-Հարությունյանին: Կտակին կից կան այլ մեծությամբ պաշտոնական թղթեր, որոնց բոլորն ստորագրված և կնքված են Մասեհ Բաբաջանի կողմից, և որի ստորագրությունը հաստատված է երեք անձնավորությունների կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.— Ամենասուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն Հայր և Որդի և Սուրբ Հոգի:

Կեցո զիս ներքոյ ստորագրօղ Բաբաջանի (և կամ հասարակ կոչմամբ Մարտիրոսի) որդի Մասեհիս. որ եմ հաւատով ուղղափառ քրիստոնեայ, ազգաւ հայ, քաղաքաւ և ծննդեամբ համադանցի, գործով վաճառական, բնակիչ ի Կալկաթայ քաղաքիս, որ ի հնդիկս՝ ընդ տէրութեամբ անգլիացւոց, ամէն:— Յամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն և չորք, մայիս ամսոյ յերեսնօջն. ես յիշեալ Մասեհս, յառողջութեան ժամանակի իմում ամենայնիւ զգաստ միտս և զգայարանս ունելով՝ հաստատեցի կտակս այս իմով ստորագրութեամբ: Յորում նախ յայտնեմ զամենայն ստացուածս իմ որ ունիմ ներկայ, որպէս ամենայն յատկութեամբ ի ներքոյ գրեալ տեսանի: ....

(Այստեղ տրվում է կտակի հինգ մասերը, որտեղ ձևակերպված է կտակարարի կամքը:)

(Վերջում գրված է)

Թ. 2բ.— Արդ՝ վերջաւորութիւն տալով բանից իմոց, յայտնեմ զի այս է իմ վ.....րն. որպէս անա վասն հաստատութեան և հաւաստութեան, չորք թուղթ մի օրինակ գրեցի, և ի ներկայս(թեան) ստորագ(րեցի) և կնքեցի ի փառս ամէնօրհնեալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ միոյն աստուծոյ՝ որում փառք և երկրպագութիւն մատուցս..... նզրաւ յաւիտենից. ամէն: Եղև յամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն և չորք. ի մայիս ամսոյ յերեսնօջն, ի Կալ(կաթա):

(Ստորագրություն և կնիք)

Վկայեմք՝ որ ստորագրեաց և կնքեաց, հոչակեաց և հաւանեաց վերն յիշեալ Մասեհ Բաբաջանն. (կամ հասարակ կոչմամբ՝ Մասեհ Մարտիրոսն), թէ՝ այս իմ կտակն այ և իմ յետին կամքն այ, և իւր խընդրանօքընն՝ մեր անունն գրեցինք աստ որպէս վկայ: Վերն գրածն, չորք՝ մին օրինակ համեմատ միմեանց գոլով՝ միևնոյն ժամանակումն ձեռնադրեաց առաջի մեր:

(Երեք անձի ստորագրություն)

(Նույն ձևով ստորագրված և կնքված են մնացյալ փաստաթղթերը):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ.— (Ստորագրություն) Մասէհ Բ(աբա)ջան կամ Մարտիրոս: (Այստեղ կա կտակարարի անձ-

նական կնիքը, որ կնքված է կարմիր կնքամոմի վրա: Ունի 2 սմ. տրամագիծ: Ներքևում կա մի փոքրիկ երկրագունդ, որի վրա մի արծիվ է կանգնած թևարաց: Սրանց չորս կողմը կա շրջանակաձև լատինատառ մի գրություն, որ փոքր լինելու հետևանքով կարելի չեղավ կարդալ):

(Ապա տրված է երեք վկաների անունները)

Տէր Ստեփաննոս քահանայ Տէր Յարութիւնեան.

Մարգար Յովաննէսեան Բաբումեանց.

Յովանջան Պետրոսեան:

Թթ. 3ա—4բ.— (Կա մի փաստաթուղթ 23 նոյեմբերի 1793 թ., որի տակ կա հետևյալ ստորագրություններն ու կնիքը)

Թ. 3բ.— Մասէհ Բաբաջան կամ Մարտիրոս (ապա երեք վկաների ստորագրությունը) Տէր Յակոբ Տէր Պետրոսեան

Մարգար Յովաննէսեան Բաբուսեանց

Ներսէս Ոհաննէսեան:

Թ. 4բ.— Մասէհ Բաբաջան կամ Մարտիրոս (Կարմիր կնքամոմից նույն կնիքը):

Թթ. 5ա—5բ.— (Կա մի փաստաթուղթ 1 ապրիլի 1795 թ., որի տակ կա հետևյալ ստորագրություններն ու կնիքը)

Թ. 5բ.— Մասէհ Պապայջան կամ Մարտիրոս.

(Կարմիր կնքամոմից նույն կնիքը): (Ապա երկու վկաների ստորագրությունը)

Էլիազ Մինասեան

Մուրադ Էլիջեան:

Թ. 6ա.— (Կա հինգ տողանոց մի փաստաթուղթ 1 ապրիլի 1795 թ., որի տակ կա հետևյալ ստորագրությունն ու կնիքը):

Մասէհ Պապայջան կամ Մարտիրոս

(Կարմիր կնքամոմից նույն կնիքը):

Թ. 7ա.— (Կա մի փաստաթուղթ 15 մարտի 1795 թ., որի տակ կան հետևյալ ստորագրություններն ու կնիքը)

Մասէհ Բաբաջան կամ Մարտիրոս

(Կարմիր կնքամոմից նույն կնիքը)

(ապա երեք վկաների ստորագրությունը)

Տէր Յակոբ Տէր Պետրոսեան

Մարգար Յովաննէսեան Բաբումեանց

Նոյնպէս Դաւիթ Աստուածատրեանս վկայեմ:

(Շորից պատրաստված ծրարի վրա գրված է) Ardaches Effendi:

№ 363
ՄԱՍԵՀ ԲԱԲԱՋԱՆԻ ԿՏԱԿԻ ՊԱՏՄԵՆԸ

Թերթերը՝ 5:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 35,8×23,5×0,01 սմ.:— **Նյութը՝** հասարակ դեղնած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 5բ:— **Տողերը՝** 30:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն** անհայտ:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիր փաստաթուղթն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Բովանդակութիւն կտակայ Համադանցի Մարտիրոս Բաբաջանի որդի Մասեհի:

Կտակ 1794 Մայիս 30-ի:

Թ. 3ա.— Կտակ 1793 Նոյեմբերի 20-ի:

Թ. 3բ.— Կտակ 1795 Մարտ 15-ի:

№ 364
ՆԱՄԱԿ

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 21×17,3×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ:— **Տողերը՝** 31:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Հարություն Հակոբյան:— **Ժամանակը՝** 8 շաբաթ 1795 թ.:— **Վայրը՝** Մադրաս:— **Ծանոթություն՝** ձեռագիր փաստաթուղթն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

(Շարունակելի)